Արձանագրություն N 2

ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/44 ծածկագրով ՀՀ Արագածոտնի մարզի Վարդենիսի դպրոցի կառուցման (մնացորդային) աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան	21.11.2019թ. ժամը 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Ա. Միրզոյան
Հանձնաժողովի անդամներ՝	Դ. Շատվերյան
	Ռ. Եղիազարյան
	Ար. Գրիգորյան
	Գ. Գևորգյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ն. Հարությունյան

1. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/44 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների մասին

(Ա. Միրզոյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.

ա) Գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2019 թվականի նոյեմբերի 15-ին, ժամը 11:30-ին:

բ) Գնման գործընթացը կազմակերպվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն:

գ) Գնման առարկայի նախահաշվային արժեքը կազմում է 69 356 390 (վաթսունինը միլիոն երեք հարյուր հիսունվեց հազար երեք հարյուր իննսուն) ՀՀ դրամ:

դ) Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

ՀՀ դրամ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի գումարը)	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը
1	<<Ռադիկ Շին>> ՍՊԸ	52 000 000	-	52 000 000
2	<<ԱՐՏԱՐՍ>> և <<ԽԱՉՄԻՇՇԻՆ>> ՍՊԸ-ների կոնսորցիում	54 900 000	10 980 000	65 880 000
3	<<Շինկարկաս>> ՍՊԸ	56 600 000	11 320 000	67 920 000
4	<<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ	56 640 000	11 328 000	67 968 000

ե) Ներկայացված փաստաթղթերն ուսումնասիրելու նպատակով հանձնաժողովը կասեցրել է 15.11.2019թ. նիստը և որոշել հաջորդ նիստը հրավիրել մինչև հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

1.2 ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ին N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը կասեցրել է 2019 թվականի նոյեմբերի 19-ի նիստը և ծանուցել բավարար գնահատված վերը նշված կազմակերպություններին 2019 թվականի նոյեմբերի 21-ին ժամը 15:00-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գնումների կազմակերպման բաժնում (ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, IV հարկ, 460 սենյակ) գների նվազեցման շուրջ բանակցություններին մասնակցելու մասին:

1.3 Հրավիրված բանակցություններին չեն ներկայացել <<Շինկարկաս>> և <<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ-ները:

Բանակցություններին ներկա մասնակիցներից՝ <<Ռադիկ Շին>> ՍՊԸ-ի և <<ԱՐՏԱՐՍ>> և <<ԽԱՉՄԻՇՇԻՆ>> ՍՊԸ-ների կոնսորցիումի կողմից ներկայացվել են հետևյալ նոր գնային առաջարկները՝

ՀՀ դրամ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի գումարը)	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը
1	<<ԱՐՏԱՐՍ>> և <<ԽԱՉՄԻՇՇԻՆ>> ՍՊԸ-ների կոնսորցիում	45 000 000	9 000 000	54 000 000
2	<<Ռադիկ Շին>> ՍՊԸ	47 500 000	-	47 500 000

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/44 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին

(Ա. Միրզոյան)

2.1 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը, հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները և Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովի կողմից հայտերը գնահատվել են հետևյալ կերպ.

Մրցույթում զբաղեցրած տեղը	Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
1	<<ԱՐՏԱՐՍ>> և <<ԽԱՉՄԻՇՇԻՆ>> ՍՊԸ-ների կոնսորցիում	բավարար
2	<<Ռադիկ Շին>> ՍՊԸ	բավարար
3	<<Շինկարկաս>> ՍՊԸ	բավարար
4	<<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ	բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Ա. Միրզոյան)

3.1 Հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը՝ հանձնաժողովը որոշում է.

ա) ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել գնման ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

բ) Ծանուցել 1-ին տեղը զբաղեցրած մասնակցին՝ <<ԱՐՏԱՐՍ>> և <<ԽԱՉՄԻՇՇԻՆ>> ՍՊԸ-ների կոնսորցիումին՝ ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/44 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Ա. Միրզոյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելու օրվանից հաշված մինչև տասն աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Միրզոյան

Անդամ՝ ---------- Ռ. Եղիազարյան

---------- Դ. Շատվերյան

---------- Ար. Գրիգորյան

---------- Գ. Գևորգյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Հարությունյան